

**Փաստաբանների կողմից ծառայություններ մատուցելու ազատության արդյունավետ  
իրականացմանը նպաստելուն ուղղված՝ ԽՈՐՀՀԴԻ 1977 թվականի մարտի 22-ի ՀՐԱՀԱՆԳ**

(77/249/ԵՏՀ)

(ՊՏ, L 77, 26.03.1977թ., էջ 17)

Պաշտոնական տեղեկագիր

| Փոփոխված՝                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                              | Համար | Էջ  | ամսաթիվ      |
|--------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|-------|-----|--------------|
| Խորհրդի 2006 թվականի նոյեմբերի 20-ի թիվ 2006/100/ԵՀ հրահանգով                                                                                                                                                                                                                                                                                                                                          | L 363 | 141 | 20.12.2006թ. |
| Փոփոխված՝                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                              |       |     |              |
| «Հունաստանի անդամակցության մասին» ակտով                                                                                                                                                                                                                                                                                                                                                                | L 291 | 17  | 19.11.1979թ. |
| «Իսպանիայի և Պորտուգալիայի անդամակցության մասին» ակտով                                                                                                                                                                                                                                                                                                                                                 | L 302 | 23  | 15.11.1985թ. |
| «Ավստրիայի, Շվեդիայի և Ֆինլանդիայի անդամակցության մասին» ակտով                                                                                                                                                                                                                                                                                                                                         | C 241 | 21  | 29.08.1994թ. |
| (համապատասխանեցված՝ Խորհրդի թիվ 95/1/ԵՀ որոշմամբ, Եվրատոմ, ԱՊԵՀ)                                                                                                                                                                                                                                                                                                                                       | L1    | 1   | 1.01.1995թ.  |
| Չեխիայի Հանրապետության, Էստոնիայի Հանրապետության, Գիպրոսի Հանրապետության, Լատվիայի Հանրապետության, Լիտվայի Հանրապետության, Հունգարիայի Հանրապետության, Մալթայի Հանրապետության, Լեհաստանի Հանրապետության, Սլովենիայի Հանրապետության և Սլովակիայի Հանրապետության անդամակցության պայմաններին և այն Պայմանագրերում կատարվող փոփոխություններին վերաբերող ակտով, որոնցով հիմնադրվում է Եվրոպական միությունը: | L 236 | 33  | 23.09.2003թ. |

**Փաստաբանների կողմից ծառայություններ մատուցելու ազատության արդյունավետ  
իրականացմանը նպաստելուն ուղղված՝ ԽՈՐՀՐԴԻ 1977 թվականի մարտի 22-ի ՀՐԱՀԱՆԳ**

(77/249/ԵՏՀ)

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ,

հաշվի առնելով «Եվրոպական տնտեսական համայնքի հիմնադրման մասին» պայմանագիրը և,  
մասնավորապես, դրա 57-րդ և 66-րդ հոդվածները,

հաշվի առնելով Հանձնաժողովից ստացված առաջարկը,

հաշվի առնելով Եվրոպական պառլամենտի եզրակացությունը <sup>(1)</sup>,

հաշվի առնելով Տնտեսական և սոցիալական հարցերով կոմիտեի եզրակացությունը <sup>(2)</sup>,

քանի որ, համաձայն Պայմանագրի, անցումային ժամանակաշրջանի ավարտից սկսած արգելվում է  
ծառայությունների մատուցման որևէ սահմանափակում քաղաքացիության կամ գտնվելու  
(բնակության) վայրի պայմանների հիմքով,

քանի որ սույն Հրահանգն առնչվում է միայն ծառայությունների մատուցման միջոցով  
փաստաբանների գործունեության արդյունավետ իրականացմանն ուղղված միջոցներին, և քանի որ  
անհրաժեշտ կլինեն առավել մանրամասն մշակված միջոցներ՝ նպաստելու հիմնադրման իրավունքի  
արդյունավետ իրականացմանը,

քանի որ, եթե փաստաբանները պետք է արդյունավետ կերպով իրականացնեն ծառայություններ  
մատուցելու ազատությունը, ընդունող անդամ պետությունները պետք է տարբեր անդամ  
պետություններում այդ մասնագիտությամբ գործունեություն իրականացնող անձանց ճանաչեն  
որպես փաստաբաններ,

քանի որ սույն Հրահանգը վերաբերում է միայն ծառայությունների մատուցմանը և չի նախատեսում  
դիպլոմների փոխադարձ ճանաչման մասին դրույթներ, անձը, որի նկատմամբ կիրառվում է  
Հրահանգը, պետք է գործունեություն իրականացնի այն անդամ պետությունում կիրառվող  
մասնագիտական կոչումով, որտեղ նա հիմնադրվել է (այսուհետ՝ «անդամ պետություն, որտեղից նա  
եկել է»),

ԸՆԴՈՒՆԵՑ ՍՈՒՅՆ ՀՐԱՀԱՆԳԸ.

*Հոդված 1*

1. Սույն Հրահանգը կիրառվում է, սույն Հրահանգով սահմանված սահմանափակումներով և  
պայմաններով, ծառայություններ մատուցելու միջոցով փաստաբանների կողմից իրականացված  
գործունեության նկատմամբ: Անկախ սույն Հրահանգում նշված դրույթներից՝ անդամ  
պետությունները կարող են փաստաբանների սահմանված կատեգորիաներին վերապահել՝  
պաշտոնական փաստաթղթեր պատրաստել մահացած անձանց գույքի կառավարիչ դառնալու և  
պաշտոնական փաստաթղթեր մշակել հողամասի նկատմամբ իրավունքներ ձեռք բերելու կամ  
փոխանցելու համար:

|                   |                   |
|-------------------|-------------------|
| 2. <i>Բեկցիա՝</i> | Avocat — Advocaat |
| <i>Դանիա՝</i>     | Advokat           |
| <i>Գերմանիա՝</i>  | Rechtsanwalt      |
| <i>Ֆրանսիա՝</i>   | Avocat            |
| <i>Բրիտանիա՝</i>  | Barrister         |
|                   | Solicitor         |

<sup>(1)</sup> ՊՏ թիվ C 103, 05.10.1972թ., էջ 19 և ՊՏ թիվ C 53, 08.03.1976թ., էջ 33:

<sup>(2)</sup> ՊՏ թիվ C 36, 28.03.1970, էջ 37 և ՊՏ թիվ C .SO, 4.03.1976թ., էջ 17:

|                                 |                          |
|---------------------------------|--------------------------|
| <i>Բտալիա՝</i>                  | Avvocato                 |
| <i>Լյուքսեմբուրգ՝</i>           | Avocat-avoué             |
| <i>Նիդերլանդներ՝</i>            | Advocaat                 |
| <i>Միացյալ Թագավորություն՝</i>  | Advocate                 |
|                                 | Barrister                |
|                                 | Solicitor                |
| <i>Հունաստան՝</i>               | Δικηγόρος                |
| <i>Բուսանիա՝</i>                | Abogado                  |
| <i>Պորտուգալիա՝</i>             | Advogado                 |
| <i>Ավստրիա՝</i>                 | Rechtsanwalt             |
| <i>Ֆինլանդիա՝</i>               | AsianajajaAdvokat        |
| <i>Շվեդիա՝</i>                  | Advokat                  |
| <i>Չեխիայի Հանրապետություն՝</i> | Advokát                  |
| <i>Էստոնիա՝</i>                 | Vandeadvokaat            |
| <i>Գրայրոս՝</i>                 | Δικηγόρος                |
| <i>Լատվիա՝</i>                  | Zvērināts advokāts       |
| <i>Լիտվա՝</i>                   | Advokatas                |
| <i>Հունգարիա՝</i>               | Ügyvéd                   |
| <i>Մալթա՝</i>                   | Avukat/Prokuratur Legali |
| <i>Լեհաստան՝</i>                | Adwokat/Radca prawny     |
| <i>Սլովենիա՝</i>                | Odvetnik/Odvetnica       |
| <i>Սլովակիա՝</i>                | Advokát/Komerčný právnik |
| <i>Բուլղարիա՝</i>               | Адвокат                  |
| <i>Ռումինիա՝</i>                | Avocat.                  |

### *Հոդված 2*

Յուրաքանչյուր անդամ պետություն հոդված 1(1)–ում նշված գործունեությունն իրականացնելու նպատակով որպես փաստաբան է ճանաչում այդ հոդվածի 2–րդ պարբերությունում նշված ցանկացած անձի:

### *Հոդված 3*

1–ին հոդվածում նշված ցանկացած անձ գործունեություն է իրականացնում այն անդամ պետությունում կիրառվող և տվյալ պետության լեզվով կամ լեզուներից մեկով արտահայտված մասնագիտական կոչման համաձայն, որտեղից նա եկել է՝ նշելով այն մասնագիտական միությունը, որի կողմից նա ստացել է փաստաբանական գործունեություն իրականացնելու թույլտվություն, կամ այն դատարանը, որտեղ նա տվյալ պետության իրավական ակտերի համաձայն իրավունք ունի փաստաբանական գործունեություն իրականացնելու:

#### Հոդված 4

1. Ցանկացած ընդունող անդամ պետությունում դատական վարույթներում կամ պետական մարմիններում հաճախորդին ներկայացնելուն առնչվող գործունեություն իրականացվում է տվյալ պետությունում հիմնադրված փաստաբանների համար սահմանված պայմանների համաձայն՝ բացառությամբ տվյալ պետությունում գտնվելու (բնակության) վայր կամ մասնագիտական միությունում գրանցում պահանջող պայմանների:

2. Նման գործունեություն իրականացնող փաստաբանը հետևում է ընդունող անդամ պետության մասնագիտական վարքագծի կանոններին՝ չսահմանափակելով իր պարտավորություններն այն անդամ պետությունում, որտեղից նա եկել է:

3. Եթե նման գործունեությունն իրականացվում է Միացյալ Թագավորությունում, «ընդունող անդամ պետության մասնագիտական վարքագծի կանոններ» նշանակում է իրավախորհրդատուների (solicitors) նկատմամբ կիրառվող մասնագիտական վարքագծի կանոններ, եթե նման գործունեությունը նախատեսված չէ դատական փաստաբանների (barristers) և փաստաբանների (advocates) համար: Այլապես, կիրառվում են դատական փաստաբանների և փաստաբանների նկատմամբ կիրառվող մասնագիտական վարքագծի կանոնները: Այնուամենայնիվ, Իռլանդիայից դատական փաստաբանների նկատմամբ կիրառվում են Միացյալ Թագավորությունում դատական փաստաբանների և փաստաբանների նկատմամբ կիրառվող մասնագիտական վարքագծի կանոնները:

Եթե նման գործունեությունն իրականացվում է Իռլանդիայում, «ընդունող անդամ պետության մասնագիտական վարքագծի կանոններ» նշանակում է դատական փաստաբանների նկատմամբ կիրառվող մասնագիտական վարքագծի կանոններ այնքանով, որքանով դրանք կարգավորում են գործի բանավոր ներկայացումը դատարանում: Մյուս բոլոր դեպքերում կիրառվում են իրավախորհրդատուների նկատմամբ կիրառվող մասնագիտական վարքագծի կանոնները: Այնուամենայնիվ, Միացյալ Թագավորությունից դատական փաստաբանների և փաստաբանների նկատմամբ միշտ կիրառվում են Իռլանդիայում դատական փաստաբանների նկատմամբ կիրառվող մասնագիտական վարքագծի կանոնները:

4. 1-ին պարբերությունում նշված գործունեությունից բացի այլ գործունեություն իրականացնող փաստաբանի նկատմամբ շարունակվում են կիրառվել այն անդամ պետությունում գործող պայմանները և մասնագիտական վարքագծի կանոնները, որտեղից նա եկել է՝ չհակասելով ընդունող անդամ պետությունում այդ մասնագիտությունը կարգավորող կանոններին՝ անկախ դրանց աղբյուրից, հատկապես եթե դրանք վերաբերում են փաստաբանական գործունեության իրականացման և այդ պետությունում իրականացվող այլ գործունեության անհամատեղելիությանը, մասնագիտական գաղտնիքին, այլ փաստաբանների հետ փոխհարաբերություններին, միմյանց հակասող շահեր ունեցող կողմերի համար նույն փաստաբանի գործունեությամբ զբաղվելու արգելքին և հրապարակայնությանը: Վերջին կանոնները կիրառվում են, միայն եթե դրանք հնարավոր է պահպանել այն փաստաբանի կողմից, որը հիմնադրված չէ ընդունող անդամ պետությունում, և այնքանով, որքանով դրանց պահպանումը օբյեկտիվորեն հիմնավորված է՝ տվյալ պետությունում փաստաբանի գործունեության պատշաճ իրականացման, մասնագիտության հեղինակության ապահովման և անհամատեղելիությանը վերաբերող կանոնների պահպանման նպատակով:

#### Հոդված 5

Դատական վարույթներում հաճախորդին ներկայացնելուն առնչվող գործունեության իրականացման համար անդամ պետությունը կարող է պահանջել, որպեսզի փաստաբանները, որոնց նկատմամբ կիրառվում է 1-ին հոդվածը՝

— ներկայանան նախագահող դատավորին՝ տեղական կանոններին և սովորույթներին

համապատասխան, իսկ անհրաժեշտության դեպքում՝ ընդունող անդամ պետությունում համապատասխան փաստաբանների միության նախագահին.

— համատեղ աշխատեն այն փաստաբանի հետ, որը գործունեություն է իրականացնում համապատասխան դատական մարմնում և որը, անհրաժեշտության դեպքում, հաշվետու կլինի այդ մարմնին, կամ աշխատեն այդ մարմնում գործունեություն իրականացնող «avoué»-ի կամ «procuratore»-ի հետ:

#### *Հոդված 6*

Յուրաքանչյուր անդամ պետություն կարող է թույլ չտալ պետական կամ մասնավոր կազմակերպությունում վարձու աշխատանք կատարող փաստաբաններին գործունեություն իրականացնել դատական վարույթներում՝ այդ կազմակերպությունը ներկայացնելու առնչությամբ այնքանով, որքանով այդ պետությունում հիմնադրված փաստաբաններին չի թույլատրվում իրականացնել նման գործունեություն:

#### *Հոդված 7*

1. Ընդունող անդամ պետության իրավասու մարմինը կարող է պահանջել, որպեսզի ծառայություններ մատուցող անձը հաստատի փաստաբանի իր որակավորումները:

2. 4-րդ հոդվածում և ընդունող անդամ պետությունում գործող պարտավորությունները չկատարելու դեպքում տվյալ անդամ պետության իրավասու մարմինը իր կանոնների ու ընթացակարգերի համաձայն սահմանում է դրանից բխող հետևանքները և, այս նպատակով, ծառայություններ մատուցող անձի մասին կարող է ձեռք բերել ցանկացած անհրաժեշտ մասնագիտական տեղեկություններ: Այն ծանուցում է կայացրած ցանկացած որոշման մասին այն անդամ պետության իրավասու մարմնին, որտեղից այդ անձը եկել է: Նման փոխանակումները չեն ազդում տրամադրված տեղեկությունների գաղտնիության վրա:

#### *Հոդված 8*

1. Անդամ պետությունները գործողության մեջ են դնում սույն Հրահանգի կատարման համար անհրաժեշտ ակտերը ծանուցումից հետո երկու տարվա ընթացքում և այդ մասին անմիջապես տեղեկացնում Հանձնաժողովին:

2. Անդամ պետությունները Հանձնաժողովին են ներկայացնում ազգային իրավունքի հիմնական ակտերի տեքստերը, որոնք ընդունվում են սույն Հրահանգով կարգավորվող ոլորտում:

#### *Հոդված 9*

Սույն Հրահանգը հասցեագրված է անդամ պետություններին: